ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

---

N---46------
<<3>> 04 2012թ.

Արմավիրի մարզպետ
Պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացվում է Ջրառատ համայնքի 2012 թվականի մարտ ամսվա Գյուղապետի որոշումները և կարգադրությունները:

Առդիր---7------ էջ

Համայնքի ղեկավար------------- Գ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3229-12
05 04 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

«5 » ՄԱՐՏԻ 2012թ. N 6

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ Հոդվածով և հիմք ընդունելով Ջրառատի գյուղապետարանի ավագանու 17. 02. 2012թ. N1 նիստի 4-րդ որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատի գյուղական համայնքի 0237-0008 ծածկագիր 0.15 հա գյուղ. Նշանակության այլ հողը կադաստրային արժեքով՝ ուղղակի վաճառքով վաճառել Քնարիկ Հարությունյանին տարածքը ընդլայնելու նպատակով:
2. Քնարիկ Հարությունյանի հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ջրառատի համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան

2012թ. Մարտի 15-ին
Գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

---

«12 » _մարտի 2012թ. N 7

«ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ընտրական օրենսգրքի>> 16-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին Ջրառատ համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել`
   1) Ջրառատի միջնակարգ դպրոց,որը գտնվում է Իսահակյան փ.2 հասցեում տարածքի տիրապետող Ջրառատի միջնակարգ դպրոցի ուսմասվար կազմակերպչական գծով Ժիրայր Վարդանյան Գագիկի ;
   2) «Ջրառատի մանկապարտեզ» Հոկտեմբերյան փ.2 հասցեում Տարածքի տիրապետող «Ջրառատ մանկապարտեզ»-ի տնօրեն Լուսինե Ղազարյան:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ջրառատի համայնքի ղեկավար Գ.Հովհաննիսյան

2012թվականի մարտի 12-ին
գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

---

«12 » _մարտի 2012թ. N 8

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ընտրական օրենսգրքի>> 20-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով :

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ազգային ժողովի ընտրություններին. մասնակցող թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառներ փակցնելու համար Ջրառատ համայնքի տարածքում առանձնացվել է հետևյալ անվճար տեղերը՝
   1) Մշակույթի տուն Արարատյան փ.2 հասցեում `90 քառ.մ
   2) Յուրա Հովհաննիսյանի տուն Լուսագյուղի խճ.2 հասցեում ` 50քառ.մ:
   3) Դանիել Կարապետյանի տուն Արարատյան փ.6 հասցեում՝ 60 քառ.մ
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ջրառատի համայնքի ղեկավար Գ.Հովհաննիսյան

2012թվականի մարտի 12-ին
գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

<<_15_>> ՄԱՐՏԻ______2015__ թ. N_9_

# ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Հովհաննես Հավհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ գյուղական համայնքի Արաքսի փողոց թիվ 3 հասցեում գտնվող 2001 թվականին կառուցված բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը՝ 424 քառակուսի մետր, համարել 1969 թվականի մարտի 6 ին ծնված քաղաքցի Հովհաննես Հովհաննիսյանի որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Հովհաննիսյան

20[illegible] թվականի Մարտի <<-15-->>

գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«26» ՄԱՐՏԻ 2012թ. N 10

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ 3.22 ՀԱ 0.9339 ՀԱ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ և 0.1547 ՀԱ. 0.3958 ՀԱ. 0.5070 ՀԱ ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. օգոստոսի 4-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին>>:
N 1704-Ն որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ջրառատի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող. գյուղ նշանակության այլ հողեր 3.22 հա, 0.9339 հա վարելահողեր վաճառելու աճուրդային կարգով և ջրային հողեր 0.1547 հա, 0.3958 հա, 0.5070 հա վարձակալությամբ տրամադրելու:
2. Վաճառվող հողատարածքի մեկ քայլի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, յուրաքանչյուր քայլը, մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ջրառատի համայնքի ղեկավար

Գ. Հովհաննիսյան
2012թ. Մարտի 26-ին
Գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

«26 » ՄԱՐՏԻ 2012թ. N 11

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17 կետով , ՀՀ կառավարության 02. 02. 2012թ. թիվ 88 որոշման պահանջներով և Ղուկաս Մուրադյանի դիմումով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ջրառատ գյուղի Արարատյան 70 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Ղուկաս Մուրադյանին պատկանող բնակարանի նպատակային նշանակությունն փոխել հասարակականի, օգտագործման նպատակը՝ ատամնաբուժարանի և հանել բնակելի ֆոնդի հաշվեկշռից;
2. Ատամնաբուժարանին տալ հասցե՝ Արարատյան 70/1:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Ջրառատի համյնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան
2012թ. Մարտի 26-ին
Գ. Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ

# Կարգադրություն

«11» ՄԱՐՏԻ 2012թ. N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի փրկարարական վարչության 2012թ-ի հիմնական միջոցառումների պլանի 12.2.2 կետի, 2012թ-ի մարտի 16-ի Ջրառատ համայնքում անցկացվելիք <<Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման կապակցությամբ

## Կարգադրում եմ՝

1. 2012թ. մարտի 16-ին Ջրառատ գյուղի համայնքապետարանում իմ ղեկավարությամբ անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն <<Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով:
2. Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել համայնքի ՔՊ ղեկավար կազմին, տարահանման հանձնաժողովը և ՔՊ կազմավորումների հրամանատարներին:
3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի տեղակալ Մակիչ Պողոսյանին:
4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ մինչև մարտի 1-ը մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և մինչև մարտի 13-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին:
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ջրառատի համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան
2012թ. Մարտի 11-ին
Գ. Ջրառատ